

2986

616.9

tu-28

616-9

Խ - 28

Բ. Վ. Խ 0208 Բ Ե Ա 68

№ 12

ՎԵՆԵՐԱԿԱՆ ԱԿՏԵՐ

Դրան է 1 ընթ.

կրկու խօսք. — Վեներական տիտիր,
— Սիֆիծիք, որտ տարածութեալ բու-
յութ. — Տզաւարու և զնօչ ուսու-
նակ. — Միջանցքի հասարակ բորբ-
ռութ. Եակուդ շնոկը և բարօն, վե-
ներական տիտիրի տարածութեալ ու
ցանից խայտ տաք. — Նախազգուշակոն
միջոցներ և խորհուրդներ:

Թ Ի Ֆ Լ Ի Բ Ա
Եկեղեցա-տպարան «Հ Պ Ո Ւ Ա» Մուգ. № 8.
1918

ՅԺ. Վ. ԽԱԶԱՏԵԱՆՑ

№ 12

ՎԵՆԵՐԱԿԱՆ ԱԽՏԵՐ

Երկու խօսք.—Վեներական տիտեր,
—Վիֆիլիս, սրա տարածումն ու բաւ-
ժումն.—Ծղամարդու և կնոջ սուսու-
նուկ.—Միզանցքի հասարակ բորբո-
քումն. Կակուղ շանկը և բուքօն. վե-
ներական տիտերի տարածումն, սո-
ցանից խոյս տալը.—Նախազգուշական
միջոցներ և խորհուրդներ,

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Ելեքտրա-տպարան ՀՀՊՕԽԱԿԱ Մուլ. № 8.
1918

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ.

Լոյս ընծայելով ներկայ գրքոյկը,
մեր նպատակն է տալ որոշ անհրա-
ժեշտ անդեկութիւններ սեռական հի-
ւանդութիւնների, նոցա տարածման,
նոցանից խոյս տալու և մասամբ էլ
ուռւժման միջոցների մասին:

Վեներական ախտերը մի այնպիսի
մեծ չարիք են, որնցից պէտք է լուս
ամենայնի խոյս տար: Մենք ուրիշ
դէպքերում խօսած ենք վեներական
ախտերի պահանջների մասին և խոր-
հուրդ ենք տւած այդ ախտերով հիս-
տանդներին չամուսնանալ և առաջ չը-
րերել հիւանդու, վտիւ, խեղճ ու
կրակ սկրունդ, որպիսին պէտք է
տանջւէ, տառապէ իւր ծնողների մեղո-
քի, անփութութեան պատճառով: Այժմ
էլ կրկնում ենք, որ եթէ մէկը հիս-
տանդացիւ է վեներական ախտով, նա
բարոյական ոչ մի իրաւունք չունի
ամուսնանալու, մինչև որ կատարելա-

47200-ԿԿ



324 89 - ԿԿ

2009

պէս չը բժշկւի, մինչև որ բժիշկը թոյլ
չը տայ:

Քանի քանի ընտանիքներ, քանի
քանի նոր ամուսնացած դեռ մեղրամ-
սում գտնուող կանայք հիւանդանում,
վարակում են իրենց ամուսիններից
վեներական ախտերով. միթէ այդ
թոյլատրիլի է, միթէ այդ է պահան-
ջում բարոյականութիւնը:

Վերը խօսելով վարակւածների ա-
մուսնութեան մասին, պէտք է աւե-
լացնեմ և այս, որ եթէ որ և է մէկը
թիւրիմացութեամբ, հիւանդ լինելով
հանդերձ, ամուսնացել և կամ երբ նա
ամուսնանալուց յետոյ վարակւել է
սիֆիլիսով, այդպիսին իրաւունք չու-
նի երեխայ ունենալու, սերունդ ա-
ռաջացնելու:

Ինչպէս է մեղաւոր նորածին, անմեղ
երեխան, որ պէտք է տարիներ շա-
րունակ տանջւէ իւր ծնողից ժառան-
գած հիւանդութեամբ և վերջն էլ դեռ
ծաղիկ հասակում սառը հողի մէջ
հանգիստ գտնէ: Այդպիսի ծնողները
կատարում են մահացու մեղք, սար-
սափելի ոճիր:

Գրքոյիս մէջ որոշ չափով բուժ-

ման միջոցների մասին խօսելով հան-
դերձ, պէտք է ասեմ, որ սեռական
հիւանդութիւններից ազատւելու հա-
մար անհրաժեշտ է բժշկի հսկողու-
թեան տակ բժշկւել, նրա խորհուրդ-
ներով և նրա անմիջական ցուցմունք-
ներով առաջնորդւել:

Մենք փափագում ենք տեսնել ամեն
մի մարգու առողջ, կայտառ, կենսու-
նակ. իսկ զրա համար անհրաժեշտ է ժո-
ղովրդականացնել բժշկականութիւնը:

Անցել են այն ժամանակներն, երբ
բժշկականութիւնն որոշ անհատների
ձեռքն էր տրւած իրեն մենաշնորհ.
այժմ պէտք է ամեն ոք բժշկականու-
թեան մասին որոշ գաղափար ունե-
նայ, մանաւանդ ծանօթ լինի առող-
ջապահութեան պահանջներին:

Ամենքս պէտք է աշխատենք հիւան-
դութեան դէպքերում անմիջապէս
կտրուկ միջոցներ ձեռք առնել բժշկի
տւած բոլոր խորհուրդներին լրջօրէն
վերաբերենք, իսկ մեր շրջապատք ա-
ռողջապահիկ պայմանների մէջ գնենք,
որպէսզի մենք և մեր ապագայ սե-
րունդն առողջ լինելով՝ կարողանանք
օդատաւետ լինել թէ մեզ, թէ մեր ըն-

տանիքին և թէ այն հասարակութեան,
որի անդամն ենք կազմում:

Թղթի և տպագրութեան ներկայ
ձգնաժամի պատճառով ստիպւած էինք
կրնատել մեր նիւթի որոշ մասերը,
մանավանդ վեներական ախտերի բազ-
մատեսակ բարդութիւնները, թողնե-
լով այդ ազագայում տպագրական
գործի աւելի բարեյաջող պայման-
ներում լոյս ընծայելու:

Բժ. Դ. Խաչատրեանց

1918 թ.
10-ին Ապրիլ.



ՎԵՆԵՐԱԿԱՆ ԱԽՏԵՐ

Վեներական են կոչում այն վա-
րակիչ հիւանդութիւններն, որոնք անց-
նում են մէկից մի ուրիշին գլխաւո-
րապէս սեռական յարաբերութեան մի-
ջոցով: Այս կարգի հիւանդութիւնները
հետեւալներն են:

- 1) Սիֆիլիս
- 2) Կակուզ շանկը
- 3) Սուսունակ

Ս Ի Ֆ Ի Լ Ի Ս*)

Սիֆիլիսը գիտութեան մէջ ինչպէս
որոշ հիւանդութիւն նկարագրում

*) Մանրամասն տես իմ «Սիֆիլիս և 606»
գրքոյնեւ:

է առաջին անգամ 15-րդ դարում, երբ նա իտալիայում ինչպէս համաձարակ շատ մեծ վնասներ էր պատճառում: Հստ կումանոսի նկարագրութեան՝ սիֆիլիսը հետեւալ կերպով էր որոշում, սեռական զործարանի վրայ զրսից գոյանում էր վերք, մարմինի վրայ տարածում էին թերք, կմախքն, առանձնապէս վիրջաւորութիւնների ոսկորներն ակում էին ցաւել: Ժամանակի բժիշկները թէն պարզ կերպով նկատել էին, որ հետանդութիւնը առաջանում է կասկածելի սեռական յարտիկութիւնից, բայց և այնպէս շատերը չէին բաւականանում դրանով և զանում էին ուրիշ մօմէնտներ, որոնք նպաստում էին հիւանդութեան տարածման:

Մինչև վերջին ժամանակներս, չըսայելով մասնագէտ բժիշկների գործ դրած ջանքերին, այնու ամենայնիւ անյայտ էր մնում սիֆիլիսի իսկական պատճառը. միայն 1905 թւին Շառու-

թինին յաջողւեց գտնել սիֆիլիսի մանրէն՝ որ պառուտակածն և գունատ լինելու պատճառով սպիրոլիստա պալիութեա — spirochaeta pallida անունն է կրում: Այս պառուտակածն միկրօօրդանիզմը բաժանման միջոցով շատ արագ կերպով բազմանում է. նա կարծ ժամանակում որոշ մեծութեան հասոնելուց յետոյ՝ բաժանում է երկունոր սպիրոլիստների, որոնք մեծանալով կրկին բաժանում են 4-ի, 8-ի, 16-ի, և այլն: Ահա այս մանրէները մտնելով մեր մարմին մէջ առաջանում են սիֆիլիսը:

Սպիրոլիստները մարմինի մէջ կարող են մտնել լորձնաթաղանթի (спլիզ-տայ օボոչկա) և կաշու միջոցով, եթէ վերջինիս ամբողջութիւնը խախտած է:

Վարակումը կարող է կատարւել՝ սեռական կամ արտասեռական կերպով և ժառանգաբար:

Սեռական կերպով կարելի է վարակ-

ւել սիֆիլիտիկների հետ յարաբեց
բութիւն ունենալուց:

Փառանդաբար՝ ծնողների միջոցով,
դեռ մօր արդանդում:

Արաւասեռական կերպով կարող է
հիւանդանալ ամեն մէկը կամ ուղղա-
կի, եթք նա սիֆիլիտիկների շրջանում
է գտնուում, և կամ անուղղակի: Ուղ-
ղակի կերպով սիֆիլիսը տարածւում
է մեծ մասամբ համբոյրների միջո-
ցով, ծձկեր երեխաները սանտուների
կամ մօր կրծքից շրթունքների միջո-
ցով, որոնց կաշին շատ յաճախ փոք-
րիկ ճեղքւածներ է ունենում, որն և
ընդունում է սիֆիլիսի մանրէներին:

Շատ անգամ վարակիելուն պատ-
ճառ է հանդիսանում խօսելու ժամա-
նակ սիֆիլիտիկների բերանից ցայտող
թուքը, որն ընկնելով զիմացի մար-
դու աչքի կամ բերանի մէջ, առաջ է
բերում օբգանիզմի ընդհանուր վա-
րակումն:

Անուղղակի կերպով տարածւում է

զանազան իրերի միջոցով: Օրինակ
կերակրի անօթների, տեղաշորի, հա-
գուտների, պապիրոսների մնացորդ-
ների, մունդշտուկների, ատամների
խոզանակների, լողարսններում վան-
նաների, սափրիչների և նւազողների
գործիքների միջոցով և այլն և այլն:

Սիֆիլիսի թոյնն ընկնելով մեր
մարմի մէջ, ամենակարծ ժամանա-
նակամիջոցում, վարակում է ամրող օրգանիզմը: Մօտաւորապէս մի շա-
բաթից մինչև մի ամսւայ ընթացքում
երեան է գալիս սիֆիլիսի առաջին
նշանը (Առաջին շրջան): Կոշտ շանկը,
որը սկզբում շատ փոքր գնդասեղի
մեծութեան կարմրագոյն ուսուցյաց է
ներկայացնում, նա շատ անգամ մե-
ծանալով զառնում է մինչև 2—3 կո-
պէկանոցի չափ: Կոշտ շանկը դուրս
է գալիս վարակման տեղում:

Քիչ յետոյ վէրքի մօտ գտնւած
գեղձերն սկսում են իրանց մէջ առ-
նել սիֆիլիսի թոյնն, աշխատելով

Նրանց ոչնչացնելը, որից և այդ գեղաձերը մեծանում ուռչում են: Այսուհետեւ հետեւում է երկրորդ շրջանը, որը քայլքայող յատկութիւն ունի օրգանիզմի վերաբերմամբ: Այդ շրջանում հիւանդի մարմինի վրայ երեան են գալիս զանազան մեծութեան բծեր՝ սկզբում բաց կարմրագոյն, ապա դառնում են աւելի մուգ և շատ անգամ էլ աւելի կապտաւուն: Հիւանդի գլխի մազերը, յօնքերն, արտեանունքներն սկսում են թափւել, հիւանդը զգում է գլխացաւ, որն առանձնապէս անկողին մանելուց սաստկանում է: Ակսում է նոյնապէս ոսկրացաւ: Այս շրջանում հիւանդանում են և ներքին օրգաններից շատերը, ծածկւելով շատ անգամ ուսույցներով, շատ հիւանդների մօտ նկատելի է և եղունգների վնասելը, որոնք փշանալով ընկնում են, իսկ դրանց տեղը գալիս են նոր, խորտ ու բորտ, անկանոն և ագեղ եղունգներ: Կեզւի վրայ երեան են գալիս մեծ ու

փոքր վերքեր, որոնք սաստիկ ցաւ են պատճառում լեզւի շարժումների ժամանակ: հիւանդը չի կարողանում բնական կերպով կերակրուր ընդունել, ծամել: Նա ստիպւած է կլիզմայի կամ խողովակի միջոցով կերակրել: Շատ անգամ սարսափելի ցաւից հիւանդը բերանը բաց է պահում, նա չէ կարողանում ծնունդներն իրար մօտեցնել: Այդ պատճառով էլ սիֆիլիտիկների բերանից հսում է առատութեամբ առաջացած թուքը: Այս բոլոր ախտանիշները (սիմպատիմերը) կարող են ժամանակաւորապէս անյայտանալ, ապա կը կին երեալ, որ շատ գէպքում փոփոխակի կը կնուում է: Ահա այս շրջանն է, որ վարակման տեսակէտից շրջապատողների համար ամենավտանգուոր ժամանակն է ներկայացնում: Սրան հետեւում է սիֆիլիսի 3-րդ շրջանը, որ վերջին հարւածն է տալիս հիւանդ օրգանիզմին: Այս շրջանում առանձնապէս վնասում են նեարդա-

յին համակարգութիւնն ու ոսկորները.
հիւանդն ստանում է պրօդրիսիվ՝ առաջընթաց անդամալուծութիւն (Paralysis progressiva), ողնուղեղի չորութիւն (Tabes dorsalis), տեսողութեան խանգարում:

Այս շրջանում սիֆիլիտիկն այլ և վարակման տեսակետից վտանգաւոր է, ոչ շրջապատողների և ոչ էլ սերնդի վերաբերմամբ:

ՍԻՖԻԼԻՍԻ ԲՈՒԺՈՒՄՆ

Սիֆիլիսի բուժման՝ համար մենք ունենք երեք գլխաւոր միջոցներ՝ սընդիկ, հօդ և «ՅԵՅ» կամ սալվարզան.

Ընդիկը ընդունւած է շատ հին ժամանակներից և գործ է ածւում զանազան եղանակներով:

Գործածութեան ամենալաւ միջոցներից մէկը համարւում է սնդիկի լուծւածքի սըսկում մաշկի տակը:

Այս նպատակի համար վերցնում են՝

Սուլէտա	0,1 գրամ	Rr. Sublmati	0,1
Աղ	1,0 գրամ	Natr. chlor. 1,0	
և լուծում են 10,0 գրամ		Aq. destie. 10,0	

ջրի մէջ

Այս լուծւածքից ըստ բժշկի հայեցողութեան շաբաթական մի քանի անգամ սըսկում են մի գրամ (պրօվացի շպրիցի մէջոցով մօտ 30—40 անգամ):

Սըսկումները սովորաբար անում են նստատեղի մկանունքների մէջը, սովորականից աւելի մեծ ասեղով, որպէսզի գեղը աւելի խորը կարելի լինի ներուսոկել, ապա սըսկած վայրը քիչ պէտք է մերսել:

Սըսկման համար գործ են ածւում նոյնալէս սնդիկի այլ բաղադրութիւններ, սակայն ինչպէս նոցա մասին, նոյնալէս և սըսկման մանրամասնութիւնների մասին մենք չենք խօսի, ի նկատի առնելով այս, որ հիւանդներն իրենք առանց բժշկի չը պէտք է օդուեն վերոյիշեալ բաղադրութիւնը

ներից այլ անհրաժեշտ է դիմել բը-
ժըշկի խորհրդին և այն էլ, եթէ հա-
րաւոր է, մասնագէտ բժշկի:

Սնդիքը կարելի է տալ նոյնպէս հա-
պերի միջոցով և կամ ինչպէս սույն-
մայի լուծւածք. պէտք է յիշեմ որ
այս ձևով սնդիքը երկար ժամանակ
չի կարելի գործ ածել, որովհետև սո-
վորաբար կարճ ժամանակում առաջ
է գալիս ստամոքսի և աղիքների գոր-
ծունէութեան խանգարումն:

Զմոռանամ յիշելու, որ վերոյիշեալ
դեղերի գործածութեան ընթացքում
անհրաժեշտ է առանձնապէս ուշ
դարձնել բերանի և ատամների լոդեր-
քի առողջապահութեան, ամեն օր ա-
տամներն և լոդիքը մաքրել խոզանա-
կով (պետք), բերանը յաճախակի ո-
ղողել բերոլէտեան աղի լուծւածքով
(^{1/2} փոքր թէյլ գդալ մի բաժակ ջրի
մէջ), վերմանգանական կալիով և կամ
սովորական աղի լուծւածքով:


Լոդերքի բորբոքման դէպերում

լաւ է ազդում նոյնպէս եօդ քսելը
(смазываніе): Եթէ հիւանդը փչացած
ատամներ ունի և մասնաւանդ ատամ-
ների արմատներ, այդպիսիները պէտք
է անպատճառ դուրս հանեն: Արգել-
ում է նոյնպէս գեղերի գործածու-
թեան ընթացքում ծիկլը:

Եօդի Դործածութիւնը: Միփիլիսի
բուժման համար մեծ զեր է կատա-
րում նոյնպէս եօդային կալին (օճա-
տայ կալի՝ —մանիշային կալին),
մասնաւանդ հիւանդութեան ելլորդ շըր-
ջանում և զանազան բարդութիւնների
ժամանակ՝ զիխացաւի, խիստ յօդա-
ցաւերի և ընդհանրապէս երբ սիփի-
լիսը ընդունում է ծանր կերպարանք:

Սովորաբար տալիս են 4 գրամ հօ-
դային կալի 200 գրամ ջրի մէջ լու-
ծած, հացի գղալով, օրական 2 կամ 3
անգամ կաթի հետ, ուտելուց յետու:

Պակասարիւն պիֆիլիտիկներին օդ-
առաէտ է հօգը նշանակիլ երկաթի



կամ մկնդեղի (մատեյակ) և ձկան խղի
հետ:

Մնդիկով բուժման եղանակներից
մէկն է և շփումն (Ետիրանի) մնդիկային
իւղով (մնդիկի և խոզի ճարպի հաւա-
սար մասիքից բօնկացած խառնութեղ):

Շփումը կատարւում է զանազան ե-
ղանակով, ամենից յարմարն և ընդուն-
ւածը հետեւելն է՝ առաջին օրն շը-
փում են ձախ սողը, երկրորդ օրը աջ
սողը, 3-րդ օրը մէջըլը, 4-րդ օրը կը-
ներն, իսկ 5-րդ և 6-րդ օրը հիւանդն ըն-
դունում է լողարան: Ամեն անգամ
պէտք է շիկ 4-5 գրամ վերոյիշեալ
մնդիկային իւղից (րդուհայ մազ):

Շփումը պէտք է կատարէ հմուտ
ֆէլդշէր, որը նախ և առաջ պէտք է
մարմնի որոշ մասը տաք ջրով և օճա-
ռով մաքուր լւանայ, ապա չորացնե-
լով այդ տեղը՝ սկսէ շփման գործո-
ղութիւնը: Շփումը կատարւում է
մինչև այն ժամանակ, երբ իւղի փայլը
չըանում է և մաշկն ընդունում է մո-

մի դոյն՝ առանց փայլի: Այս եղանա-
կով բժշկումը պէտք է կատարել մօ-
տաւորապէս 4-6 շաբաթ, որից յե-
տոյ պէտք է ընդհատել:

Եթէ բուժման ընթացքում սկսում
է ստամոքսի խանդարումն՝ լուծումն,
պէտք է շփումն ընդհատել և կամ
փորձել իւրաքանչիւր 2-3 շփումից
յետոյ ընդունել տաւ լողարան և մի
օր հանգիստ:

Երբեմն մասնագէտներն ստիպւած
են լինում մնդիկի փոխարէն զիմել
ըէլօրբինի, սովորաբար ըէլօրբինի
զիմում են այն դէպքերում, երբ
հիւանդի մաշկը բորբոքւում է մնդի-
կի վերոյիշեալ իւղից:

Կան մնդիկով բուժման և այլ բազ-
մաթիւ եղանակներ:

Մնդիկով բուժումը պէտք է տնէ
մօտաւորապէս 4-6 շաբաթ, որից
յետոյ պէտք է մօտ 3 ամիս ընդմի-
ջումն անել որպէսպի այդ ժամանակի
ընթացքում մնդիկը հիւանդի մաք-

նից դուրս գայ: Սովորաբար այս 3
ամսւայ ընդմիջումից յետոյ կրկին ե-
րեան են գալիս սիՓիլիսի նշանները.
այդ ժամանակ պէտք է կրկին դիմել
բուժման նոյն եղանակով, ինչպէս և
առաջին անգամ, եթէ նոյն իսկ հի-
ւանդապին նշաններն էլ չը լինեն: Մի
քանի սիՓիլիզօգներ պահանջում են
6 ամսից յետոյ կրկին բուժման
պլոցեգուբան կրկնել, եթէ նոյն իսկ
սիՓիլիսի կրկնման ոչ մի նշան ան-
դամ չը լինի և եթէ արեան քննու-
թիւնը (Վասսէրման) բացասական հե-
տեանքներ է տալիս, այսինքն երբ
արեան մէջ չեն գտնում սիՓիլիսի
սպիրօխէտները:

Եթէ ժամանակի ընթացքում յան-
կարծ երեան են զալիս սիՓիլիսի նը-
շաններ, անմիջապէս պէտք է կրկնել
մնդիկի բուժման նոյն օրէնքներով,
ինչ որ վերը առացինք առաջին նշան-
ների ժամանակ:

ԵԳՐԼԻ ԽԵԱՆ «606»-Ը

Սնդիկի և եօդի ըուժումը տեսմ է
երկար ժամանակ և երբեմ էլ առանց
բաւարար հիտեանքների, ուստի
մասնագէտ-գիտնականները շատ վա-
զուց փորձեր էին անում գտնելու
որ և է այլ՝ աւելի յարմար միջոց:
Այս բանը վիճակւած էր հոչակաւոր
գիտնական հըլիիխին, որ երկար ժա-
մանակ նւիրւած էր բիմիօթէրապիա-
լին-որը և գտաւ «606*»-ը:

Երեւիթը «606»-ի գիտը և ազդե-
ցութիւնը հետեւեալ կերպով է բացատ-
րել Վէնայի բժիշկ Գլազէրին:

«Դուք գիտէք թէ ես ինչի եմ ձրգ-
տում իմ քիմիօթէրապիայով. չը որ
կան շատ հիւանդութիւններ, որ ոչ
մի շիջուկով չեն բժշկում. այդ տե-
սակ հիւանդութիւնների համար բը-
ժշկականութիւնը պէտք է ձգտէ զտնե-
ների ժամանակ:

*) Այս մասին տես իմ «ՍիՓիլիս և Հաթա-
էրլիխան 606» գրքոյնը:

լու այնպիսի մի նիւթ, որը կարողանար ոչնչացնել վերոյիշեալ ձիւանդութիւնների գրդիչ բակտէրիաներին, առանց իրեն՝ օրգանիզմին վաս պատճառելու Այս նպատակին համեմելու համար անհրաժեշտ է մի այնպիսի նիւթ, որ ունենայ որոշ նմանութիւն, վոխագարձ ձգողութիւն և այդ պարագիաներին միանող յատկութիւն։ Ահա այդպիսի նիւթը կարող է անվասդարձնել յիշեալ մանրէները։ Երկար տարիների փորձառութիւնից յետոյ ես եկել եմ այն եղբակացութեան, որ որոշ կարգի վարակիչ հիւանդութիւններն, ի միջի այլոց և սիֆիլիսը, փոխազարձ ձգողական և միացող յատկութիւն ունին, երեքատմեան մկնդեղի միաւորութեան։ Գըտնելով այս, մնում եր առաջ բերել մի այնպիսի բաղադրութիւն, որն, օրգանիզմին առանց վաս պատճառելու, ոչնչացներ սիֆիլիսի մանրէները։ Ահա այդպիսի մի առանձնայատկու-

թիւն ունի գիօքսի գիամիզօարգէնօրէնզոլ պրեպարատն, որը «Յօն» է անւանւած։ Գոնէ մինչև այժմ արած փորձերը ցոյց են տալիս, որ վերոյիշեալ «Յօն»-ը ոչնչացնում է սպիրոխէտա պալիգաներին առանց օրգանիզմին վաս պատճառելու, դրանից յետոյ անհրաժեշտ էր էքսպերիմենտներ անել կենդանիների վրայ և ապա փորձեր մարդկանց վերաբերմամբ։

«Յիմիօթէրապիան», որ ձգտում է մի հարւածով ազատել մարդկանց ծանր վարակիչ հիւանդութիւններից, նման է խիւռուրդիալին։ մի դէպքում խիւռուրդիան դանակին է գործում, հեռացնելով հիւանդ մասերն առողջ օրգանիզմից, միւս դէպքում ը ի միա կան գանակն է հանդէս գալիս, մեռցնելով ոչնչացնում օրգանիզմը քայլայող պարագիաներին։ Երկու միջոցներն եւ որոշ դէպքերում կարող են երկիրդալի հանդիսանալ, և եթէ խիւռուրդիան այսօք այդքան մեծ յառա-

ջադիմութիւն է արել, շնորհիւ նըան՝
որ նա ընդհանրութեան օգտի համար
չէ վախենում բիսկներ անելոց, այս-
պէս և քիմիօթէրապիան, եթէ մի
նիւթից բաղմաթիւ եքսպերիմենտներ
անելով՝ եկած ենք այն հղակացու-
թեան, որ այդ նիւթն իրօք ընդու-
նակ է հազարաւոր մարդկանց բժշկե-
լու ծանր անբուժելի հիւանդութիւն-
ներից, այդ դէպքում բարոյական
սկարտականութիւն է զբում որոշ
բիսկ անել, քան թէ թողնել հիւան-
դին իր բաղդին: Ենքն ըստ ինքեան
հեշտ չէ այդպիսի մի պատասխանա-
տուութիւն յանձն առնել, բայց առանց
ուրան անմիտ կը լինէր բժշկականու-
թիւնը...»

Առաջին և ամենագլխաւոր հարցը,
թէ ինչ աղդեցութիւն ունի «606».ը
սիֆիլիսի ժանրէների՝ սպիրօխէտա
պալիդաների վերաբերմամբ, ինչպէս
վերը յիշեցինք նա միանգամայն ցան-
կացած արդիւնքն է տալիս—ոչնչաց-

նելով ամենակարճ ժամանակամիջու-
ցում սպիրօխէտա պալլիդաներին:

Ապա առաջ է գալիս մի ուրիշ հարց,
թէ ինչ կողմանակի վաստակար ազգե-
ցութիւն է անում «606».ը կենդանի
օրգանիզմի և նրա օրգանների վերա-
բերմամբ: Ինըը էրթիխը հաստատում
է, որ միմիայն սիֆիլիսով հիւանդ օր-
գանիզմին 0,4—0,6 զրամ պրէպա-
րատը կողմանակի ոչ մի վատ ազգե-
ցութիւն չունի: Մի քանի բժիշկներ
նկատել են, որ 0,6-ից աւելի մեծ
զօղաները վատ աղդեցութիւն են ա-
նում սրտի վրայ: Դօքտօր Տիրը Նկա-
տել է «606».ի սրսկումից յետոյ տե-
սողութեան թեթև թուլութիւն, որը
շուտով է անցել: Ուրիշ շատ կլինիցիստ
պրօֆէսօրներ հաստատում են, որ
«606».ը ոչ մի վատ աղդեցութիւն չէ
անում տեսողութեան վրայ: Նոյնիսկ
շատ դէպքերում սիֆիլիսից թուլա-
ցած աշըի տեսողութիւնը, նոր դէպի
սրսկումից յետոյ, սկսել է զօրեղա-
նալ:

Այն հարցը, թէ կարմղ է «606»-ը թունաւորումն առաջ բերել, որոշւած է բացասական կերպով և որ մինչև այժմ նկատելի չեն եղել թունաւորման գէպքեր, և եթէ երևացել են շատ թոյլ թունաւորման նշաներ, դա էլ հեռացւած է վերակազմւած «606» ԽХIII: Հստ Լոկէմանի փորձերի՝ «606»-ը դուրս է գալիս օրգանիզմից մէզի միշտով. առանձին հետևանքներ նկատելի չեն եղել: «606»-ով սրսկւած հիւանդների մէզը չի ունեցել ոչ շաքար և ոչ էլ սպիտակուցային նիւթեր:

Հստ գօքտօր Գիշշիկի քննութեան պէտք է որ «606»-ի սրսկումից անմիջապէս յետոյ՝ արեան սպիտակ գնդակների թիւն անցողական կերպով աւելանալիս լինի:

Առանձնապէս բարերար ազդեցութիւն է անում թոքախտաւոր սիֆիլիտիկների վրայ, որոնց շատ անգամ անդիկը վաստ ազդեցութիւն էր անում. այժմ չաթա-էրլիխեան նոր պրեպա-

րատը պակասեցնում է նրանց հազն ու թեթևացնում կատարը, եթէ միայն հիւանդը բոլորովին ուժամպաշէ եղած թոքախտից...

Առայժմ կարելի է ասել, որ «606»-ը միակն է և գերագոյնն եղած բոլոր միջոցներից: Այստեղ, ուր սնդիկը և եօդը անզօր էին, «606»-ը իւր ըուժիչ յատկութիւնն է ցոյց տալիս ծձկեր երեխաներն, որոնք հալ ու մաշ լինելով մահւան գիրին էին ընկնում, այժմ ամենակարճ ժամանակում ազատում են սիֆիլիսից, իրենց «606»-ով սրսկւած մօր կաթն ընդունելով: Մի քանի դէպքեցում երլիխի «606»-ի սրսկմամբ բոլորովին անցել է սիֆիլիսից առաջացած և երկար ժամանակ գոյութիւն ունեցող դեղնացւը:

Վերջին ժամանակներս, ինչպէս պատերազմի թատերաբիմերում նոյնպէս և թիկունքում բժիշկների մեծագոյն մասը հաստատեցին, որ «606»-ը բռւ-

ժիշ ազդեցութիւն ունի անդրագարձ
տիֆի վերաբերմամբ:

Վերջապէս չը պէտք է մոռանալ
«606»-ի այն զլխաւոր յատկութիւնը,
որ սրա բժշկութեան ընթացքը՝ սըրս-
կումը տեսում է ոչ աւել, քան մի քա-
նի բոպէները:

Եղան մի երկու կլինիցիստներ, ո-
րոնք ուզում էին ուրանալ «606» ի
փառքն և ընթում էին պատահական
դէպքեր, որ մահով էին վերջացած և
կամ ցոյց էին տւած բէցիդիվ (հի-
ւանդութեան վերսկումն),

Բէցիդիվի համար ինչպէս ժամա-
նակին երլիխը, նոյնպէս և ուրիշ
մասնագէտ սիֆիլիտօլոզներ այժմ
պնդում են, որ պատճառը մեծ սա-
սամբ դեղի անհամապատասխան քա-
նակն է, որ սիալ է վերցնել փոքր
զօգաներ: Շատ բժիշկներ տուածին
փորձերն անելիս՝ երկիրդ են կրել
սրսկելու 0,5—0,6 գրամ և վերցրել
են միայն այդ քանակի կէսը. զբան

իբրև հետեանք պատահել են բէցի-
դիվներ. բացի սրանից՝ մասամբ էլ
պատճառ են եղել դեղի պատրասե-
լու կամ սրսկելու որոշ տիխնիքական
սիրաները:

Այսպիսի պատահական դէպքերը,
չին կարող ոչնչացնել «606»-ի մեծ
նշանակութիւնը: Ասացէք ինդրիմ
խլօրօֆօրմն, որ խիրուէ գների աջ
ձեռն է ներկայացնում, քիչ անախոր-
ժութիւնների պատճառ է հանդիսա-
նում և մթթէ դեղամատեաններից
պէտք է ջնջել խլօրօֆօրմ անունը
կամ ուրանալ նրա անհրաժեշտու-
թիւնը:

Հաթա-ինըլիխան նոր պըրեպարատը
բաց դեղնապոյն փոշի է, որը լուծե-
լով որոշ հեղուկների մէջ սրսկում
էին զլխաւորապէս նստատեղի մկա-
նունքների կամ մէջքի վրայ, թիակ-
ների մէջ տեղը, իսկ այժմ սրսկումեն
ուղղակի արինազարձ անօթների
միջը: Ասացներում երբ տեղը մկա-

Նունքների մէջ էին սրսկում հիւանդները սաստիկ ցաւ էին զգում սրսկած տեղերում, որ տեսում էր մի քանի օր, տաքութիւնը հասնում էր մինչև 38,5. պուլսն արագանում էր, սիրտը խառնում, պատահում էր և փռսիւմն էր բոլոր երևյթներն, այսօր զգալի կերպով պակասած են, շնորհիւ դեղը լուծելու եղանակի կատարելագործման և էնրիխի նոր վերակազմած սալվարդանի: 606» սըստ կումից 24 ժամ յետոյ պարզ կերպով նկատելի է լինում սիֆիլիսի կոշտերի փափկանախն, իսկ կարճ ժամանակից յետոյ բոլորովին անցնում են:

ՍՈՒՍՈՒՆԱԿ

Սուսունակը վարակիչ սեռական հիւանդութիւն է, որը տարածւում է սեռական յարաբերութեան միջոցով, սառչ այլ ինչ է եթէ ոչ միզանցքի մազասամաշկի բորբոքումն, Նայսէրի գօնօկօկ կոչչած բակտերիայով:

Նայսէրի գօնօկօկը կարելի է տեսնել մանրազիտակի միջոցով, եթէ մենք քննութեան առնենք միզանցքից հոսող թարախը. «Երբեմն միզանցքից հոսող թարախը գօնօկօկներ չի պարունակում և բորբոքումն կարճ ժամանակից անցնում է, այսպիսի գէպքերում իհարկէ մենք ոչ թէ սուսունակի հետ գործ ունենք այլ միզանցքի հասարակ բորբոքման, որը յաճախ պատահում է եթէ սեռական յարաբերութիւնը կատարւում է կնոջ ամսեկանի ժամանակ, ուրիշ գէպքերում կիզառութիւնից, իսկ երբեմն էլ մըսելուց:

Եթէ մէկը նկատում է սուսունակի ախտանիշեր, բայց ուշադրութեան չի առնում և անմիջապէս բժշկի չի զիմում, ենթադրելով թէ դուցէ հասարակ, ոչ սուսունակային բորբոքումն է, այդպիսին կատարում է մեծ սիրալ և կարող է մհծապէս դուժել և զոհ գնուլ հիւանդութեան:

Բնդիանուր առմամբ պէտք է ասեմ որ սուսունակը ոչ թէ միայն սեռական անգամի հիւանդութիւն է, այլ ամբողջ օրգանիզմի, մանավանդ սկըզբի օրերում երբ վարակւածը իրեն ամբողջ մարմով հիւանդ է զգում:

Սուսունակով մի անգամ հիւանդացուք չի ապահովում կրկին անգամ հիւանդանալուց, եթէ նա դարձեալ յարաբերութիւն ունենայ սուսունակով հիւանդ անհատի հետ:

Սուսունակով վարակւում են ինչպէս աղամարդիկ նոյնպէս և կանայք:

Եթէ սուր սուսունակը ժամանակին չենք բժշկում, այն ժամանակ նա ընդունում է խրոնիքական ձև, զօնօկնելը կարող են տարածել մարմի այլ օրգանների մէջ և շատ ծանր բարդութիւններ առաջ բերել:

ՏՂԱՄԱՐԴՈՒ ՍՈՒՐ ՍՈՒՐԿԻՆԱԿԸ

(Օստրի տրիպեր մայքինի.)

Տղամարդու սուր սուսունակի ախտանիշները սկսում են վարակումից՝ կասկածաւոր անհատի հետ յարաբերութիւն ունենալուց, մօտաւորապէս 2—4 յետոյ, իսկ երբեմն էլ այդ նշաններն կարող են առաջ դալ աւելի ուշ:

Սկզբնական ախտանիշներն են՝ միզանքի քոր գալն, մանավանգ միզանցքի ծայրում, որը միզելու ժամանակ փոխում է ցաւի: Միզանցքի ծայրը քիչ կարմրում, ուռչում է, որտեղից երեսում է քիչ քանակութեամբ լորձիւնանման թարախ, որը մի երկու օր յետոյ բաւական առատանում և սկսում է կաթ-կաթ հոսել միզանցքից. հիւանդը յաճախակի ուզում է միզել, որի ժամանակ սաստիկ ցաւ է զգում: Այնուհետև քանի՛ գնում միզանցքի ցաւը աւելի խստանում է, մանաւանդ տոնանդամի լարման ժամանակ. առ-

Նանդամի խիստ լարումից և դրան
հետևողցաւկից հիւանդը գիշերները չի
կարողանում քնել։ Այս բոլոր երե-
ւոյթներ Յ-դ շարթից սկսած թուլա-
նում են, մանաւանդ եթէ բուժման
հետ միասին հիւանդը կանոնառ,
նօրմալ կեանք է վարում, թարախը և
ցաւը պակասում են և այդպիսով հիւ-
անդը աստիճանաբար առողջանում է։

Այս ձեփ թեթև սուսունակը շատ
հազւագիւտ է. սովորաբար 4-րդ շար-
թում ոչ թէ միայն վարակւածն ա-
ռողջանում է, այլ ընդհակառակն, մա-
նաւանդ եթէ հիւանդը չի բժշկում,
հիւանդութիւնը՝ սուսունակը կամաց-
կամաց փոխուում է իրօնիքական ձեփ,
երբեմն էլ առաջ են գալիս զանազան
բարդութիւններ։

Այժմ տեսնենք ինչումն է կայանում
սուսունակի իրօնիքական եղանակը։

ՏՂԱՄՈՐԴՈՒ ԽՐՕՆԻՔԱԿԱՆ ՍՈՒՍՈՒՆԱԿ

(Хронический тришеръ мужчины)

Խրօնիքական սուսունակն առաջ է
գալիս սուր սուսունակից, ելք հիւ-
անդութեան սուր նշանները թուլա-
նում են և բորբոքած միզանցքի պա-
տերը սկսում են առողջանալ, բացի
որոշ սահմանափակ մասերից, որտեղ
բորբոքած զրութիւնը շարունակում
է մալ և երբեմն էլ անցնում է մի-
զանցքի յիախն մասերին։

Խրօնիքական սուսունակի ախտանիշնե-
րը հետևեալներն են. հիւանդի մէջը պա-
րունակում է կարճ զանազան ձեփ թե-
լեր, միզանցքից հոսում է երբեմն շատ,
երբեմն աննշան քանակութեան լոր-
ձիւն, որը մանաւանդ առաւօտները
նկատում է միզանցքի մէջ. երբեմն այդ
լորձիւնը խառն է լինում թարախի
հետ, եթէ որևէ պատճառով բորբո-
քումն խստացած է, որի հետ միասին

մէզն էլ ընդունում է բղոքը տեսքը:
Խրօնիքական սուսունակի ժամանակ
յաճախ զգացում է քոր միզանցքի
մէջ, որը երբեմն փոխում է նոյն իսկ
ծակոցի՝ ցաւի. նոյնը զգացում է և
վերջաղիքում:

Խրօնիքական սուսունակը որոշելու
համար, առաւտան անկողնից բարձրա-
նալուց պէտք է միզել մաքուր բաժա-
կի մէջ. մէզը անցնելով միզանցքի
միջավ լւանում է նրա բորբոքւած
պատերը և այդպիսով բաժակի մէջ
հաւաքւած մէզում երեան է գալիս մի-
զանցքի բորբոքւած մազասամաշկից
արտազրւած լորձիւնը, որից և ըննե-
լով կարելի է որոշել թէ այդ լորձիւնը
Բարախախառն է թէ ոչ: Թարախա-
խառն լորձիւնով մէզը պղտոր է լի-
նում, իսկ եթէ միայն լորձիւն է լի-
նում, այն ժամանակ մէզը թափանցիկ
է, բայց պարունակում է թելեր և
ամպանման լորձիւնը լողում է մէզի
մէջ. պէտք է յէշել որ թելերը առվա-

բարար բաղկացած են լինում թարա-
խի մասն զնդակներից և զօնօկօկնե-
րից:

Շատ յաճախ մէզը ոչ շատ պղտոր է
լինում և ոչ էլ բարորովին թափացիկ
այլ մէջին տեսք ունի. սա ընդհանրա-
պէս կտիւած է միզանցքի բորբոքւ-
ման ասուիճանից և ընթացքից: Վերը
յիշեցի, որ դեռ ևս սուր սուսունակի
ժամանակ երբեմն բորբոքում՝ թա-
րակում անցնում է միզանցքի յետին
մասը. որոշելու համար թէ բորբո-
քումը միայն միզանցքի առաջի մա-
սումն է թէ յետին մասին էլ է ան-
ցած, սովորաբար եետևեալ միջացին
են զիմում:

Առաւտեան եըը ճիւանդը անկողնից
բարձրանում է, պէտք է ըիչ բանակու-
թեամբ սիզէ մաքուր բաժակի մէջ և
յետոյ կրկին միզէ մի ուրիշ բաժա-
կում. եթէ միայն առաջին բաժակի
մէզն է պղտոր և կամ պարզ լինելով
հանդերձ պարունակում է թելեր, իսկ

Երկրորդ բաժակինը բոլորովին պարզ է, այն ժամանակ ակնյայտնի է, որ միայն միզանցքի առաջին մասն է բորբոքւած՝ վարակւած. իսկ եթէ թէ առաջին և թէ երկրորդ բաժակի մէջն է պղտոր և կամ պարունակում է սուսունակի թելեր, այն ժամանակ պարզ է, որ ամբողջ միզանցքն, այսինքն և յետին մասն է վարակւած:

Այս երկոյթը պարզ հասկանալու համար աւելորդ չեմ համարում կարճ կերպով բացատրել՝ երկրորդ բաժակի մէջի պղտորման պատճառը:

Միզանցը իւր մէջահղում՝ կիսում ունի մի թաղանդ՝ փեղկ, որը միմիայն միզելու ժամանակ բացւում է գէպի դուրս, իսկ միզելուց յետոյ կրկին ծածկւում է. միզանցքի միջի այս փեղկը միզանցը բաժանում է երկու մասի՝ առջևի և յետսի. եթէ միայն միզանցքի առջևի մասն է բորբոքւած, այն ժամանակ գիշերւայ ընթացքում արտադրւած լորձինը կամ

թարախը մնում է միզանցքի առջնի մասում, որը և միզելուց լացւում է և թափւում առաջին բաժակի մէջ, իսկ երկրորդ բաժակում միզելուց սահցւում է միզափամփուշտի մաքուր մէջը, որ հոսելով արդէն մաքրւած՝ լացւած միզանցքով թափւում է բոլորովին պարզ գրութեամբ:

Իսկ եթէ միզանցքի յետին բաժինն է վարակւած, այն ժամանակ գիշերւայ ընթացքում այդ մասի արտադրած լորձինը և թարախը հոսում են միզափամփուշտի մէջ և այդպիսով պղտորում փամփուշտի մէջ եղած բոլոր մէջը, որից էլ թէ առաջին բաժակում և թէ երկրորդում սահցւում է պղտոր մէջ:

Կան և այլ զանազան մասնագիտական միջոցներ, որոնցով բժիշկները կարողանում են որոշ կերպով հաստատել միզանցքի բորբոքւած մասը. սուցա մասին խօսելու կարիք չկայ, քանի որ բաւական բարդ գործողութիւններ են և մասնագէտի գործ:

Խրօնիքական սուսունակն երբեմն սուր կերպարանքէ ստանում, երևան են գտիս սուր սուսունակի ախտանիշներ՝ ցաւ, լորձիւնի կամ թարախի հոսումն, առնանդամի լարումն, յաճախակի միւզիլու ցանկութիւն. այս ախտանիշները շատ անգամ իրենք իրենց անցնում են, որպէսզի կրկին երևան գան միքանի ժամանակից յետոյ:

Այժմ տեսնենք ինչպէս պէտք է քժկել սուսունակը:

Բուժումն.—Ինկատի առնելով որ սուսունակը ոչ այլինչէ, եթէ ոչ միզանցքի բորբոքումն, հետևապէս պէտք է ուշադրութեան առնել առնանդամի հանգիստ գրութիւնը, քանի որ բոլոր բորբոքումների ժամանակ պահանջւում է ընդհանրապէս ամբողջ մարմնի և մասնաւրապէս համապատասխանող օրգանի հանգիստ գրութիւնը, առանց որի բուժումն չի տալ ցանկացած արդիւնքը:

Հեւանդը պէտք է հաւատացած լի-

նի, որ իւրաքանչիւր մի աւելորդ շաբաժում պատճառ է լինում սուսունակի քարդւելուն, աւելի խորը թափանցելուն և դժւարաբոյժ դառնալուն: Արգիլում է ինչպէս հեծանիւով (վէլօսիպէզ), ձիով, նոյնպէս և ոտով զրջելը, պարելը, կանգնած որ և է գործ կատարելը և այլն, մի խօսքով մարմնի ընդհանուր հանգիստ:

Բուժման ընթացքում ոչ միայն սեռական յարաբերութիւնն է արգելուում, այլ և պէտք է խոյս տալ սեռական գրգռումից, առնանդամի լարումից, որը զլխաւորապէս դիշերներն է լինում: Որպէսզի առնանդամը և ընդհանրապէս սեռական մասերը չառաքանան և գրգռւեն, պէտք է ընել հովոչ տաք անկողնի մէջ. վափուկ տեղակաջործը, վերմակները պէտք է մի կողմը թողնել. պէտք է խոյս տաք զանազան գրգսող՝ թթու, կծու կերակուրներից և մանաւանդ ալքոհոլային խմիչքներից:

Իբրև իմիչք կարելի է գործ ածել թէյ, թոյլ սուրճ կաթով, ջուր և այլն. ընդհանրապէս պէտք է նկատի առնել, որ մեծ քանակութեամբ անվաս խմիչքների (օրինակ թէյ կաթով) գործածութիւնը անհրաժեշտ է, որպէսզի կարելի լինի առաջ բերել բաւականաչափ մէզ: Մէզի առատութիւնը այն տեսակէտից է հարկաւոր, որ միզանցը բորբոքւած և անղաղար թարախ արտադրող պատերը լւացւեն. և մասամբ մաքրւեն գօնօկօկից և թարախից:

Սուսունակի բուժման, գլխաւոր պայմաններից մէկն է միզանցքի սըրսկումն, որն արգելում է միայն այն ժամանակ, երբ սուր սուսունակի ընթացքում երևան են գալիս զանազան քարդութիւններ, մանաւանդ առաջին օրերը, երբ յաճախ միզանցքը չափազանց բորբոքւած է լինում, Նախ քան սրակման համար գործ ածւող դեղերի

մասին խօսելը՝ մի քանի խօսքով բաշատրեմ սրսկման եղանակը:

Սրկումն առվորաբար կատարւում է սկզբում օրական 2—3 անգամ, իսկ յետոյ սրսկման թիւը կարելի է հասցնել մինչև օրական 4—5 անգամի: Ներկայիս բժիշկներից շատերը խորհուրդը են տալիս սրսկումն կատարել Տարնովսկով շպրիցով (спринցօվկա պրօֆ. Տարնովսկաց), որը բովանդակում է 5 գրամ հեղուկ: Պէտք է ուշ դարձնել, որ շպրիցը մաքուր լինի (խնամքով պահել մաքուր կտորի մէջ փաթթաթած): Դեղատան մէջ պատրաստած լուծւածքից մօտ 10 գրամ պէտք է ածել բանկայի մէջ (դեղատնից գեղի հետ արւում է այդ նպատակով յատուկ անօթ-ճահկա), որտեղից զգուշութեամբ շպրիցի մէջ հաւաքելով հեղուկ-դեղը՝ պէտք է նայել, որ շպրիցը բոլորովին լիբը լինի և աղատ տարծութիւն չնայ՝ այսինքն օդի փամփուշտներ չ'գոյանան. ապա ուղղելով

աջ ձեռքով շպրիցի ծայրը միզանցքի
բացւածքին՝ ձախ ձեռի երկու մատով
սեղմում են միզանցքի ծայրի պատերը
շպրիցին և զգուշութեամբ կամաց-
կամաց աջ ձեռքով սրսկում են
շպրիցի միջի հեղուկը միզանցքի
մէջ. ապա շպրիցը հեռացնում են մի-
զանցքից, իսկ ձախ ձեռի երկու մա-
տով շարունակում են սեղմել առնան-
դամի ծայրը, որպէսզի սրսկած հե-
ղուկը դուրս չցայտէ. այդ դրու-
թեամբ պէտք է մօտաւորապէս 4—5
րոպէ պահել, որից յետոյ մատերը
բաց են թողնում, որով և սրսկած հե-
ղուկը անմիջապէս դուրս է ցայտում:

Չմոռանամ յիշելու, որ իւրաքանչիւր
սրսկումից առաջ՝ պէտք է միզել, որ-
պէսզի միզանցքը մաքրւէ թարախից,
այլապէս շատ երկիւղալի է այս թա-
րախը, որովհետև սրսկան ժամանակ
միզանցքի միջի եղած վարակիչ թա-
րախը մղուում է զէպի միզանցքի յե-

տին մասը, որով և վարակումն աւելի
խոր է տարածւում:

Շատ մասնագէտներ խորհուրդ են
տալիս իւրաքանչիւր սրսկան ժամա-
նակ կրկնակի սրսկումն կատարել,
այսինքն երբ հեղուկ գեղը սրսկում
ենք, ոչ թէ 4—5 րոպէ պահել, այլ
իսկոյն բաց թողնել, որ զուրսցայտէ,
և յետ այնու միայն կրկին սրսկել և
այժմ պահել 4—5 րոպէ: Ինչպէս
սրսկումն կատարելուց առաջ, այնպէս
և սրսկումից յետոյ պէտք է ձեռները
մաքրուր լւանալ. նոյնպէս ամեն ան-
գամ միզելուց յետոյ, կամ եթէ որեէ
պատճառով ձեռք ենք տալիս առնան-
դամին, անմիջապէս պէտք է մաքրուր
լւացւել, որպէսզի պատահաբար չը-
վարակենք մեր աչքերը սուսունակի
թոյնով. այս բանը շատ երկիւղալի է
և կարող է կուրացման պատճառ հան-
գիսանալ. կրկնում եմ, որ այս բանին
առանձնապէս պիտի ուշ դարձնել. ինքս
տեսել եմ այդպիսի հիւանդներ, որոնք

իրենց սեփական ձեռքով վարակել են
իրենց աչքերը և կորցրել տեսողու-
թիւնը:

Մրսկումներն, ինչպէս ասացի, արգել-
ւում են այն դէպքում, երբ միզանցքի
բորբոքումը շատ խիստ է լինում,
օրինակ սաստիկ, անտանելի ցաւ մի-
զելու ժամանակ: Եթէ սրսկումները
սկսելուց յետոյ միզանցքի բորբոքումն
աւելի է խստանում, որը որոշում է
միզանցքի սաստիկ ցաւով և առաջ
թարախահոսութիւնամբ, այդ դէպքում
ևս պէտք է ժամանակաւորապէս ընդ-
հատել սրսկումները՝ մինչև որ բոր-
բոքման սուր կերպարանքն անցնէ,
որից յետոյ կրկին սկսում ենք սըրա-
կել, բայց աւելի թոյլ լուծւածքով՝
դեղերով:

Մրսկման համար ամենագործածա-
կան դեմն է պրօտօրգոլը, որից վերց-
նում են $1\frac{1}{4}^0/0$ ից մինչև $1^0/0$ լուծւածք
(սկզբում աւելի թոյլ, իսկ յետոյ աւե-
լի ուժեղ):

Մրսկումը կատարում են օրական
3—4 անգամ, դեղը պէտք է պատ-
րաստած լինի սառը վերաթորւած
(дестиллированная вода), այդ պատ-
ճառով էլ անհրաժեշտ է պատրաս-
տել տալ գեղատան մէջ և ոչ անային
կերպով: Մնացած դեղերից, որ երբեմն
փոխարինում են պրօտօրգոլին, յիշեմ
լարգին կոչւածը, որ մօտաւորապէս
նոյն չափով և նոյն տոկոսի լուծւած-
քով են գործածում: Այդ նոյն նպա-
տակի համար կան և այլ գեղեր,
բայց ես չեմ յիշում, քանի որ ընդ-
հանրապէս սրսկման համար գործա-
ծելիք գեղը պէտք է նշանակէ բժիշկը
և առանց նրա խորհրդի գեղ սըրսկելը
պէտք է երկիւզալի համարել, հետեւ-
պէս անթոյլատրելի:

Մօտաւորապէս շաբաթ պրօտօր-
գոլի գործածութիւնից յետոյ, մէզը
պէտք է քննութեան ենթարկել. և եթէ
գօնօկօկներ այլ ևս չգտնեն, այն
ժամանակ պրօտօրգոլի սրսկումը պէտք

Է ընդհատել և ոկտեմբերի սրբումն, որոնց նպատակը պէտք է լինի զործել. (вяжущая средства), ինչպէս օրինակ 3% բօրնի լուծւածք կամ վերմանգանական գալի 0,05—0,5 200,0. Այս դեղերը սրսկում են օրեկան 2—3 անգամ և միզանցքի մէջ պահում են նօտաւորապէս 3 բոլի. Այստեղ էլ աւելի նպատակայարմար է սրսկելնախ թոյլ լուծւածքներով, ապա առաջինաբար անցնել աւելի ուժեղ ներին:

Շատ մասնագէտներ խորհուրդ են տալիս այդ դեղերից, ոչ թէ մեկնումէկը ընտրել և շարունակ գործ ածել, այլ դեղերը երբէմն փոփոխել:

Բացի վերոյիշեալ բուժման միջոցներից, որոնք վերաբերում են սըրսկումներին, սովորաբար տալիս են նոյնպէս ներքին դեղեր, որոնք երկու նպատակի են ծառայում, մի կողմից աւելացնում են մէզի քանակը, որի նշանակութեան մասին վերը խօսե-

ցինք, իսկ միւս կողմից էլ այդ դեղերից շատերը միզանցքի միջով անցնելիս բարերած ազդեցութիւն են անում միզանցքի բորբոքւած մաղասամաշկի վրայ:

Այս դեղերից գործածականներն են $\frac{1}{2}$ գրամանոց սանտալի իւղի կապսիւները, որից ընդունում են օրական 4 կապսիւլ. նշանակում են նոյնպէս կօպահիվի բալզամ օրական 3 անգամ ուտելուց յետոյ 15-ական կաթիլ:

Շատ լաւ է ազդում նոյնպէս սալօլը, որից տրում է օրական 4—6 անգամ $\frac{1}{2}$ գրամ:

Այս բալզամները պէտք է գործ ածել բաւական երկար ժամանակ, դըբախտաբար այս բալզամները շատ յաճախ վատ են ազդում ստամոքսի, աղիքների և մանաւանդ երիկամունքների (почки). Վրայ, վերջնների ցաւ պատճառով: Կօպահիվի բալզամը շատ հիւանդների կաշւի վրայ ցան է ա-

ռաջ բերում, միզանցքի մաղամսաշկը բորբոքում է, երբեմն լինում է արդիւնհոսութիւն և այլն: Այսպիսի գէպքերում պէտք է լընդհատել այլ գեղերի գործածութիւնը: Հիւանդը հանգիստ պէտք է պառկէ, սառը կոմպրեներ անէ արիւնհոսութիւն առաջն առնելու համար տալ էրզօտին և այլ արիւն կանգնեցնող միջոցներ:

Կան և այլ շատ մէջ աւելացնող գեղեր, ինչպէս օրինակ ուրօտրօպին և այլն...

Բացի այս գեղերից բազմաթիւ զանազան պատրաստի գեղեր կան, որոնց յայտարարութիւններով լրագըրների էջերը լցւած են լինում. սակայն պէտք է տսեմ, որ այս գեղերը մեծ մասամբ ոչ մի օգուտ չեն տալիս հիւանդին, նորք օգտակար են միայն ծախողի, պատենտի տիրոջ գրպանին: Այդ գեղերը պատրաստող և շուկայ հանող պարոնները միջոցների մէջ ոչ մի խարութիւն չեն դնում, որպէսզի

իրենց դեղերը ըստ հնարաւորութեան շատ ծախին և գրպանները լցնեն: Մահացու մեղք պէտք է համարել, եթէ հիւանդը հնարաւորութիւն ունի բժշկի գիմելու, բայց չի դիմում և դնում է որևէ պատրաստի գեղ (պատентованное средство) և գրանից սպասում բուժման:

Պէտք է իմանաք, որ այդ գեղերը կոպէկներ արժենալով ձեղ ծախում են մի քանի բուրլով. իւրաքանչիւր գործարանատէր, որ պարագում է պատրաստի գեղեր շինելով, նա այդ գեղը ծախելու, նադդացնելու համար հարիւր-հազարի, երբեմն միլիոնի յայտարարութիւններ է անում. նա յայտարարութիւն համար փող չի լինայում, որովհետեւ համոզւած է, որ մի գեղեցիկ օր այդ յայտարարութիւնները պէտք է բերեն ուկիններ, որ այդ յայտարարութիւնները ընկամների պէտք է հիւանդների և սախումն նոցակարգի հիւանդների և սախումն նոցագնելու այդ գեղերից:

**ՄԻԶԱՆՑՔԻ ՀԱՍՈՐԱԿ ԲՈՐԲՈ-
ՔՈՒՄՆ**

Միզանցքի բորբոքման մօտաւորապէս 5% լինում է այսպէս անւանւած հասարակ՝ ոչ գօնոկօկային բորբոքումն։ Մրա պատճառը կարող է լինել կնոջ հետ ամսականի ժամանակ մերձաւորութիւն ունենալը, կամ կեղտոտութիւնից, երբեմն յաճախակի մերձաւորութիւնից։

Միզանցքի հասարակ բորբոքման պատճառ կարող է լինել հեշտոցի, արգանդի հիւանդագին դրութիւնը (շատ յաճախ մբ սելուց) և կամ կնոջ պակասարիւնութիւնը, երբ արգանդից հոսող թարախախառն լոլձիւնը (ճեռու) ընկնելով առնանդամի միզանցքի մէջ առաջ է բերում բորբոքումն ըստ երեսյթին սուսունակի ձևով, բայց առանց նայսէրեան գօնոկօկի։ Այսպիսի դէպքերում տղամարդիկ մեղադրում են կնոջը, ենթադրելով թէ նրանից

վարակւել են սուսունակով, այն ինչ խեղճ կինը բոլորովին մաքուր և առատ է յիշեալ վեներական ախտից։ Զպէտք է գոեհիկ լինել և անմեղ տեղը ուլիշներին մեղադրել. պէտք է մէջը կամ թարախը տալ քննութեան, և խոշորացոյցը կը պարզէ ամեն բան։

Երբեմն էլ տղամարդիկ կասկածելի մերձաւորութիւնից յետոյ, վախենալով որ կարող են սուսունակով վարակւել, միզանցքի մէջ սրսկամ են զանգան նախազգուշական գեղեր և այդ գեղերով առաջ քերում հասարակ բորբոքումն։

Առանց գօնոկօկի միզանցքի բորբոքման նշանները շատ աւելի թոյլ են լինում, քան իսկական սուր սուսունակի ժամանակ, սա տեսում է բաւական կարճ ժամանակ, մի քանի օրւայ ընթացքում և կամ ամենաշատը մի երեկու շաբթում բոլոր հիւանդագին երկոյթները անցնում են սովորաբար առանց հետևանքի առանց բարդու-

Թիւնների: Շատ սակաւ դէպքերում
հիւանդութիւնը կարող է անցնել մի-
զափամփուշտին և առաջ բերել վամ-
փուշտի բորբոքումն:

Բուժման համար համարեա գործա-
գրում են այն բոլոր միջոցները, ինչ
որ սուր սուսունակի ժամանակ.
Արսկման համար պէտք է վերցնել ա-
ւելի թոյլ դեղեր:

ԽՐՕՆԻՔԱԿԱՆ ՍՈՒԽՈՒՆԱԿԻ ԲՈՒԺ ԺՈՒՄՆ

Խրօնիքական սուսունակի բուժման
մասին մինք այստեղ ոչինչ չենք ա-
սի, քանի որ աներաժեշտ է այդպիսի
դէպքերում դիմել բժշկի, այն էլ մաս-
նակէտի: Ներս ընդունելու դեղերը
համարեա նոյնն են, ինչ որ սուր սու-
սունակի ժամանակ, այն ինչ տեղային
բուժումն շատ բարդ է և միայն կարող
է կատարել մասնագէտ բժիշկը:

Ի հարկէ հանգիստ կեանքը, կերա-

կուրների ընարութիւնը, խմիչքներից
խուսափելը որոշ չափով թուլացնում
են խրօնիքական սուսունակի սուր
ախտանիշները, որը և պէտք է նկատի
առնել և վարել այնպիսի կեանք, որ-
պիսին պահանջւում է սուր սուսու-
նակի ժամանակ:

ԿՆՈՉ ՍՈՒԽՈՒՆԱԿԻ

Կանանց սուսունակով վարակւելու
պատճառը նոյնն է, ինչ որ մենք ասա-
ցինք տղամարդու վերաբերմամբ, — սու-
սունակով վարակւած անհատի հետ
ունեցած յարաբերութիւնը: Հիւան-
դութեան ախտանիշներն էլ համարեա
նոյնն են՝ միայն այն տարբերու-
թեամբ, որ կնոջ մօս սուսունակի մի
քանի ախտանիշներն աւելի թոյլ են,
որա պատճառն այն է, որ կնոջ մի-
զանցքը աւելի կարճ է, հետևապէս
բորբոքումն աւելի փոքր տարածութիւն
է բանում և աւելի թոյլ կերպով են

հիւանդագին նշանները առաջ դալիս
կնոջ սուսունակի մի այլ տարրեւ-
րութիւնն էլ նրանում է կայանում,
որ երբեմ կնոջ սուսունակը ինքն ի-
րեն բժշկում է, առանց առանձնա-
պէս յատուկ բուժման դիմելու, բայց
սրա հետ միասին պէտք է յիշեմ և
այն, որ շատ յաճախ կնոջ սուսունակը
տարածւում է միզասեռական օրդան-
ների բոլոր մասերին և առաջ բերում
զանազան բարդութիւններ:

Խօսք չկայ, որ այսպիսի լայն տա-
րածումից յետոյ, հիւանդութիւնն
ընդունում է խիստ լուրջ կերպա-
րանք և երբեմ նոյն իսկ մահւան
պատճառ է հանդիսանում: Ահա թէ
ինչն կնոջ սուսունակին պէտք է
լուրջօրէն նայել և ամեն միջոց
ձեւը առնել բժշկելու համար:

Սուսունակը վարակելով կնոջ հեղ-
տոցը՝ առաջ է բերում հեղտոցի բոր-
բոքումն. վարակւած կինը սկզբում
զգում է թեթև քոր, որը յետոյ խըս-

տանալով փոխում է ցաւի, որն ա-
ռանձնապէս զգալի է լինում ման զա-
լու և միզելու ժամանակ. այնուհետեւ
բորբոքումը տարածւում է դէպի սե-
ռական անդամի շրթունքներին, որոնք
ուռչում, կարմրում են, և երեան է
գալիս թարախախառն լորձիւն, եր-
բեմ խիստ անզուրեկան հոտով: Զը
նայելով խիստ ցաւերին և առասու-
թեամբ հոսող թարախին, հիւանդու-
թիւնը կարճ ժամանակում ըուժւում
է, եթէ ժամանակին դիմել բժշկի և
լաւ հետեւել նրա պատիրաններին:

Բժշկութան ամենից առաջին պայ-
մանն է մաքրութեան հետեւելը՝ օրա-
կան մի քանի տնդամ լւանալ մարմնի
սեռական մասերը և կսմարիի կրուժ-
կայից լւանալ—որոգել (спринցոված)
հեշտոցը սուլեմայի լուծւածքով (2000
մաս ջրին վերցնել մի մաս սուլեմա).
սեռական մասերը և ազդրերի մէջ
տեղը լւանալուց յետոյ պէտք է մա-
քուր սրբիչով չորացնել և տակը ցըել.

և որպէսզի ման գալուց բորբոքւած մասերը իրար չըստեն և աւելի խըստացնեն բորբոքումն, պէտք է սեռական շրթունքների մէջ դեղը բամբակի բարակ փաթեթներ դնել: Սեռական յարաբերութիւնից պէտք է խոյս տակ՝ մինչև որ բոլոր հիւանդագին երեւոյթներն անցնեն:

Սուսունակով վարակւած հեղատոցը ժամանակին չըժշկելով մի կողմից անցնում է միզանցքին, այդտեղից էլ միզափամփուշտին, որը լուրջ հիւանդութիւն է. իսկ միւս կողմից էլ միզանցքի բորբոքումն ընդունում է խրօնիքական ձև:

Կնոջ սուսունակի բուժումը համարեայ նոյնն է, ինչ որ տղամարդու սուր սուսունակի բուժումը, միայն ի նկատի առնելով որ սրսկումները կատարելը բաւական դժւար է, այդ պատճառով սրսկումները պէտք է կատարէ բժիշկը և կամ փորձւած ֆէլլուբուհին:

Եթէ վարակւած կինը չի բժշկում իւր սուսունակը և անփութօրէն բարձի—թողի է անում, նա կատարում է մահացու մեղք: Այդպիսի կինը սուսունակի տարածման ազբիւրն է հանգիսանում, նա հիւանդացնում է իւր ամուսնուն, նա կարող է վարակել ծննդաբերութեան ժամանակ իւր սանկան աչքերը և իւր սեփական երեխայի կուբացման պատճառն լինել: Այդպիսի կինը ինքն էլ պակաս չի տանջւում սուսունակի բարդութիւններից՝ միզասեռական գործարանների բորբոքումից:

Մի կողմը թողնելով կնոջ սուսունակի բարդութիւնների նկարազբութիւնը, պէտք է կըկնեմ, որ եթէ կինը մերձաւորութիւնից մի քանի օր յետոյ նկատէ սուսունակով վարակման նշաններ, նա պէտք է անմիջապէս զիմէ բժշկին և առանց ժամանակ կորցնելու հիւանդութեան առաջն առնէ ու թոյլ չտայ նրա տարածւելուն:

ԿԱԿՈՒՀ ՇԱՆԿՐ

(Մագևի տանքը)

Կակուղ շանկրը տուած է գալիս արդ
հիւանդութեամբ վարակւած անձնու-
որութիւնների հետ ունեցած մերձա-
որութիւնից:

Վարակման պատճառը՝ թոյնը հան-
դիսանում է Durey-Krefting-ի բա-
ցիւը, որը տառառութեամբ գտնուում է
շանկրի թարախի մէջ:

Սկզբնական խոցը՝ բշտիկը երկան
է գալիս սովորաբար սեռական յարա-
բերութիւնից մէկ կամ երկու օր յե-
տոյ, սեռական անդամի վրայ:
Տղամարդկանց մօտ սովորաբար թլի-
փի ներքին մակերեսոյթի վրայ, ան-
դամի գլխիկի, միզանցքի բացւածքի
վրայ և կամ անդամի ուրիշ մասե-
րում. իսկ կանանց մօր սեռական
շրթունքների և կամ հեշտացի անցքի
վրայ:

Շանկրային խոցը կարող է լինել

մի կամ մի բանի հատ. սոցա թիւը
ժամանակի ընթացքում կարող է շա-
տանալ, եթէ հիւանդը չհետեւէ մաք-
րութեան և իւր սեփական ձեռքով
խոցի թարախը այս ու այն կողմ տա-
րածէ:

Ինչպէս ասացի, մերձաւորութիւ-
նից մի կամ երկու օր յետոյ վա-
րակման տեղը կարմրում է, իսկ յետոյ
այդ տեղում երևան է գալիս թարա-
խակալած շանկրային բշտիկը. սովո-
րաբար հիւանդութեան երրորդ օրը
թարախով լի բշտիկը պատռուում է և
առաջ է գալիս կակուղ շանկրի խոցը,
որ մեծ մասամբ կլորածէ լինում,
յատակը խորտ ու բորտ և փափուկ:

Կակուղ շանկրի խոցը խոր ընկած է
լինում, ափերը քերւած. խոցից հո-
սում է թարախ, իսկ եթէ քիչ սեղմենք՝
նոյնպէս արիւն: Այս բոլոր նշանները
ընորոշ են կակուղ շանկրի համար, ո-
րով և սա տարբերուում է սիֆիլիսային
կոշտ շանկրից:

Եթէ կակուղ շանկը անմիջապէս
բուժման հնք ենթարկում և
խռովէն հետեւմ մաքրութեանը, այն
ժամանակ մի քանի շորթում խոցը
անցնում է և հիւանդն առողջանում,
հիւանդութեան խրօնիքական ընթացք
ստանալուն նպաստում է հիւանդի
անմաքրասիրութիւնը, երբ հիւանդը
խոցից հոսող թարախը տարածում է
վերքի շուրջը և այդպիսով նոր խոցե-
րի տուաջանալուն պատճառ է հան-
դիսանում:

Բուժման համար մասնագէտները
գործ են ածում այրող զեղեր, երբեմն
էլ եթէ հարկ է լինում շանկը այսին
խոցը հեռացնում են կտրելով: Բուժ-
ման այս հղանակը միայն մասնագէտ
բժշկի գործ է և պէտք է միշտ բժըշ-
կին դիմել:

Կակուղ շանկը խոցը կարելի է
բժշկել նոյնպէս զանազան փոշիների
փաթեթներով՝ վիրակապով: Պէտք է
շանկը այսին խոցը լւանալ բորակային

թթւուտի (борная кислота) լուծւած-
քով (մի բաժակ եփած մաքուր ջղին
 $\frac{1}{2}$ թէյի գդալ բորակային թթւուտ).
որպէսզի խոցը լւանալիս չգրգռենք և
արիւնիսութեան պատճառ լինենք,
պէտք է բամբակը թրջել վերոյիշեալ
լուծւածքի մէջ և ապա մրգել խոցի
վրայ, այնուհետեւ մաքուր չոր բամ-
բակով զգուշութեամբ չորացնել լւա-
ցած վէրքը և վրան ցանել հօգօֆօրմի
փոշի, ապա դնել մաքուր մառէ, բամ-
բակ և թոյլ կերպով անդամը փաթա-
թել:

Այս գործողութիւնը պէտք է ամե-
նայն զգուշութեամբ և մաքուր կեր-
պով ամեն օր կը կնել: Եթէ փաթեթը
բանալուց նկատում, է որ մառէն
կպած է խոցին, այդպիսի դէպքում
ոչ թէ կոպտութեամբ պէտք է մառ-
էն պոկել, այլ պէտք է բորակային
լուծւածքով մառէն թրջել և բիշ ըս-
պասել մինչեւ որ խոցից պոկէ: այլա-
պէս մենք պատճառ կը լինենք խոցից

իմստ արիւնհոսման և վերքի բուժն շատ դանդաղ կը լինի:
 Եօդօֆօրմից շատ սաստիկ հոտ է գալիս. այդ պատճառով էլ երբեմն ցանելու համար վերցնում են քոհրօֆօրմ. սակայն պէտք է ասեմ որ, առաջինը աւելի լաւ է և շուտ է բժըշկում. որպէսզի սրա հոտը պակասեցնենք, պէտք է շատ զգուշութեամբ ցանենք վերքի վրայ, որ հիւանդի հագուստը բոլորովին չթաթախւի և հոտի տարածումն ուժեղացնի:

Շանկրով վարակւած մարդը պէտք է ալքոհոլային խմիչքներ չգործածէ, սահմանափակէ զանազար շարժումները, ման գալն և մանաւանդ ձի նըստելը. իսկ մերձաւորութիւնը խստորէն արգելում է.

Եթէ շանկրով վարակւածը ճշտութեամբ կատարէ բոլոր ասածներս, այն ժամանակ շանկրային խոցը հեշտութեամբ կը բուժեի առանց զանազան բարդութիւնների.

Անմաքրասէր, արբեցող, թուլակազմ և ընդհանրապէս հիւանդում մարդկանց մօտ շանկրը տեղական կերպարանը է ստանում, իմստ հոտ է գալիս և շատ զժւարութեամբ է բուժում:

ՇԱՆԿՐԱՑԻՆ ԲՈՒԺՈՆ

Կակուղ շանկրի բարդութիւններից ուշադրութեան պէտք է առնել այսպէս անւանած բուժօնը, որը շատ յաճախ է պատահում և որի առաջ գալուն առանձնապէս նպաստում է ուսով կամ ձիով երկար պտաելը, զանազան շուրժումները և այլն:

Բորօնի ուսուցչը, որը ոչ այլ ինչ է եթէ ոչ գեղձերի բորբոքումն, լինում է աճուկներից մէկում կամ երկու կողմի աճուկներում (паховая область):

Հիւանդութեան սկզբում մեծանում է գեղձերից մէկը, այնուհետև դրան

հետևում է հարեան գեղձերի ուսչելը: Ուսոյցքը սկզբում լինում է փոքր կաղնի չափ, որը յետոյ մեծանում և հասնում է մինչև ձևի մեծութեան: Այս բորբոքման տեղում մաշկը կարուում է, հիւանդը տաքութիւն է տալիս, սարսափելի ցաւ է զգում մանաւանդ շարժւելուց և ման գալուց, վերջապէս ուսոյցքը հուսունանում է, այսինքն թարախակալում է և ապա ծակւում ու թարախը դուրս է հոսում: Մաքրութեան հետևելով բուրօնի ծակւած տեղը շուտով սպիանում է և հիւանդը առողջանում է:

Բուրօնը երեալուց պէտք է միջոցներ ձեռք առնել, որ նա չմեծանայ և չթարախակալէ, այս նպատակով հիւանդին պէտք է հանգիստ պառկեցնել, ուսոյցքի վրայ սառոյց զնելը սառը կոմպրէսներ անել, որոնց միջուցով էլ բորբոքումը կարող է անցնել առանց թարախսկալելու և ծակւելու: Եթէ վերոյիշեալ միջոցները չեն

օվնում և ուսոյցքը շարունակ մեծանում է, այն ժամանակ պէտք է աշխատել, որ ուսոյցքը զուտ հասունանայ, այս նպատակով ուսոյցքի վրայ դնում են տաք ջրի պարկ (պազր) և տաքացնող կօմպրէսներ (սօրեայուղի կոմպրեսուն):

Ուսոյցքը հատունանալուց պէտք է օպերացիայի ենթարկել՝ ուսոյցքը բաց անել, սա ի հարկէ բժշկի զործ է և պէտք է ժամանակին դիմել բժշկի, որպէսզի ուսոյցքը ինքն իրեն չծակվի:

Կակուղ շանկրի և նրա բարդութիւնների մասին խօսքս ընդհատելով, մի քանի խօսքով գասնանք վեներական ախտերի նախազգուշական միջոցներին:

Բժիշկները վաղուց հաստատած են, որ վեներական ախտերով մեծ մասմբ վարակւում են հարբած գրութեան մէջ կասկածելի անձանց հետ մերձաւորութիւն ունենալուց:

Վարակման համար նպաստաւոր պայմաններ են նորկայացնում նոյն պէս այլ հանգամանքներ. այսպէս օրինակ առնանդամի մաշկի վրայ եղած ամենափոքր քերթւածքից շատ հեշտութեամբ կատարում է վարակումն. ինչպէս սիֆիլիսի այնպէս և կակուզ շանկրի թոյնն ընկնելով այդ քերթւածքի մէջ՝ անցնում է արհան և վարակում մարդուն: Նոյնպէս միզանցքի բացւածքի լայն լինելուց շատ հեշտութեամբ սուսունակի թոյնը ընկնում է միզանցքի մէջ և բորբոքումն առաջ բերում:

Վարակումից խոյս տալու համար առաջարկում է առնանդամի լւացումն զանազան ախտահանիչ միջոցներով, կօնդոմների, վազելինի գործածութիւնը մերձաւորութեան ժամանակ և այն: Անշուշտ այս ամենը բիչ ու շատ սահմանափակում են վարակումը, բայց սոցանից և ոչ մէկը չի ներկայանում:

Ինչպէս արմատական միջոց, մանաւանդ կանանց համար:

Ինչպէս արմատական միջոց միշտ մատուցոյց է արևած և մենք էլ առաջարկում ենք՝ ժուղկալութիւնը, որի համար անհրաժեշտ են առողջապահիկ պայմաններ՝ ոգելից խմբչքներից հրաժարուելը, մի կողմը թողնել ծուլութիւնը և ընդհակառակը պարտպել թէ ժառանը և թէ ֆիզիքական աշխատանքներով: Այս բոլորին իբրև հետեւանց այն կը լինի, որ երիտասարդը համեմատաբար աւելի վաղ անկախ ու աշխատաւոր կը դառնայ և ուրեմն հնարաւորութիւն կունենայ ժամանակին օրինաւոր կեանքի ընկնը ընտրել և ամուսնանալ:

Իւրաքանչիւր պատճի, իւրաքանչիւր երիտասարդ պէտք է հաստատ համոզւած լինի, որ իւր ապագայ երջանկութեան ղեկը իւր ձեռքին է և ոչ ուրիշի:

Իւրաքանչիւր անհատ պէտք է հաս-

տատ իմանայ, որ բոլոր վեներական ախտերի տարածման և վարակման պատճառն ինքն անհատն է:

Եթէ խօսիրայի, ժանտախտի կամ տիֆի դէմ մենք իբրև առանձին անհատներ անզօր ենք կուելու, եթէ այդ համաճարակներին գիմաղբելու համար մեզ ընդառաջ չեն գալիս պետութիւնը, զանազան ժողովրդական, հասարակական կազմակերպութիւնները և մենք զոհ ենք զնում այդ համաճարակներին, զա այնքան ցաւալի չէ, որքան ցաւալի է վեներական ախտերին զոհ գնալը, քանի որ այս գէպքում մեծ մասամբ մեղաւոր է հանգիսանում ինքը անհատը՝ վեներական այս կամ այն ախտով վարակւողը:

Շատերը վեներական ախտերի տարածումը վերագրում են պետութեան և հասարակական կազմակերպութիւնների, սանիտարական մարմինների անփութութեանը. սակայն պէտք է ասել, որ վեներական ախտերի տա-

րածումն ամբողջովին բարդել վերոյիշեալ մարմինների վրայ ոխալ ենթագրութիւն է: Խըրաքանչիւր անհատ ինքը պէտք է զգոյշ լինի վարակւուց՝ հիւանդանալուց այդ ախտով:

Սանիտարական մարմինները, հասարակական կազմակերպութիւններն անշուշտ կարող են նպաստել վեներական ախտերի սահմանափակման, ժողովրդական դասախոսութիւններ կազմակերպելով, հանրամատչելի բրոցիւներ հրատարակելով, պարբերական մամուլի միջոցով հասկացնելով, բացատրելով վեներական ախտերի վնասակարութիւնը, նըա քայլքայիչ յատկութիւնը և մանաւանդ օրինաւոր գործ՝ աշխատանք տալով այն կանանց, որոնք հացի խնդրի՝ չքաւորութեան պատճառով շատ յաճախ ստիպւում են իրենց մարմիննը ծախելու և այդպիսով վեներական ախտերի տարածման նպաստում:

Այժմ տեսնենք թէ ով է վեներա-

կան ախտերի տարածման պատճառը՝
աղբիւրը:

Այս ախտերի տարածման գլխաւոր
աղբիւրը՝ ներկայանում են պոռնկա-
նոցները (պէտք է սրան կցել նոյնպէս
այս ամօթարեր հիմնարկութիւններից
դուրս մնացած անթիւ անհամար, մա-
նաւանդ մեծ քաղաքներում, շրջիկ
կանալք՝ պոռնիկները), որ իրենց հա-
րազար յաճախորդներին վարակելով
զանազան վեներական ախտերով պատ-
ճառ են լինում հազարաւոր, միլիո-
նաւոր երիտասարդ կեանքերի զոհ-
ման, մաքուր ընտանիքի, ամուսնա-
կան կեանքի պառակտմանը, հիւան-
դու սերնդի առաջ գալուն և սոցա-
նկերջ տանջանքներ քաշելուն:

Վարակման՝ հիւանդութեան տա-
րածման մի այլ աղբիւրը, կամ աւելի
ճիշտ պատւաստողը՝ հանդիսանում է
երիտասարդութեան մեծագոյն մասը,
որոնք վարակւելով այս ախտերով
այնուհետեւ բերում և պատւաստում
են իրենց ընտանիքին:

Ուրեմն մի կողմից պէտք է կուել
պոռնկութեան դէմ, իսկ միւս կողմից
էլ պէտք է պատանիներին դաստիա-
րակել առողջ հոգով, բարոյապէս,
բացատրելով նոցա ժուժկալութեան և
ողջախոհութեան մեծ նշանակութեան
մասին:

Ինչպէս պոռնկանոցների, նոյնպէս և
շրջիկ կանանց մարմնի օրէնքով ըն-
գունած բժշկական քննութիւնը չը
պէտք է ընդունել իրեւնախազգուշա-
կան միջոց և կամ քիչ ու շատ նը-
պաստող վեներական ախտերի սահ-
մանափակման:

Գէտք է իմանալ, որ երբեմն նոյն
իսկ այլ գժբախտ քննութիւնը պատ-
ճառ է հանդիսանում հիւանդութեան
աւելի խիստ տարածման: Անփորձ ե-
րիտասարդը հաւատալով քննութեան
հնթարկւած կնոջը՝ խաբւում և վա-
րակւում է որևէ վեներական ախ-
տով:

Չէ որ նախ անհնարին է այդպիսի

մակերեռութային քննութեամբ որոշել կնոջ վարակւած լինելը, երկրորդ՝ չէ որ բժշկական քննութեամբ առողջ քննուած կինը կարող է վարակւած լինել, բայց գեռ ևս առանց արտաքին տեսանելի նշանների՝ ծածկւած ժամանակաշրջանում, կամ չէ որ առողջ զաւած կինը կարող է հենց առաջին իսկ մերձաւորութիւնից յետոյ վարակւել և անժիշտապէս վարակել հետևեալ զոհին՝ յանախորդին:

Վերջապէս ցաւալի է և այն պրօցէզուրան, երբ բժիշկը զնում է քննելու այդ կանանց: Սա օրէնքով ընդունուած, մի տեսակ վերաւորանք է կանանց վերաբերմամբ և սխալ զատողութիւն իւր մարմինը ծախող կնոջ առողջութեան վերաբերմամբ, և զբացաւալի հետևանքն այն է, որ կարծիւթէ այդ քննութիւնից յետոյ հրամեցէք են անում յաճախորդներին ասելով՝ «ինդրեմ մի վախինաք, մենք արդէն քննութեան են ենթարկած, կարող էք

առանց երկիւղի բաւականութիւն տալ ձեր սեռական պահանջներին»:

Պէտք է ասեմ, որ մենք ոչ իրաւարանական և ոչ էլ բարոյագիտական տեսակէտից իրաւունք ունենք քննելու միայն կնոջը: Եթէ մենք բժշկական քննութիւն ենք նշանակում պոռնկանոցի կամ շրջիկ կանանց մարմնի՝ վեներական ախտակրից ազատ լինելուն համար, ինչնու համար մենք չենք նըշանակում քննութիւն այդ նոյն հիմնարկութիւնները յաճախող աղամարդու կանց վերաբերմամբ. չէ որ այդ տղամարդիկն են վարակում յիշեալ կանանց:

Այս բանը պէտք է համարել կնոջ ինքնասիրութեան բռնաբարութիւն. և եթէ այդպիսի մի գործողութիւն թոյլատրելի է եղել նին ժամանակները, այսօք պէտք է գործածութիւնից հանել այդ և պէտք է ընտրել արմատական միջոցներ, առանց այս

կամ այն սեռի կամ անհատի ինքնաւսիրութեան շօջափման:

Իսկ այս բանի մէջ մեղ ընդառաջ պէտք է գայ ոչ թէ միայն պետութիւնը, հասարակական կազմակերպութիւնները, այլ և ամեն մի անհատ:

Գալով գաստիարակութեան՝ պէտք է յիշեմ, որ ծնողները ամեն կերպ պէտք է հոգ առնեն իրենց երեխաների ինչպէս առողջապահիկ կացութեան համար, նոյնպէս և նոցա բարոյագիտական գգացմունքների գարդացման համար:

Սարսափելի մեծ սխալ, մահացու մեղք են գործում այն հայրերը, որոնք իրենց երեխաների հետ խիստ, գաժան կերպով են վարւում:

Կորստաբեր հետհանքների պատճառ են հանդիսանում այն ծնողները, որոնք իրենց երեխայի գործած սխալմունք համար ծեծում, հայրայում են:

Դաստիարակութեան այս ձեզ սխալ է և նախառական արժանի, Այդպիսի

դաստիարակութիւնը երեխային միայն փորձանքների անգունդը գլորել կարող է:

Երեխայի իւրաքանչիւր սխալը պէտք է ամենայն մեջմութեամբ, ամենայն քաղցրութեամբ, կենդանի օրինակներով, համբերութեամբ բացատրել, հասկանալի դաշնել մատադուղիղին:

Որդու և հօր, դսաեր ու մօր միջն բացի ծնողական և որդիական կապից պէտք է լինի և ընկերական կապ: Պատանին կամ մատադ աղջիկը պէտք է ազատ լինեն իրենց ծնողների վերաբերմամբ, նոքա պէտք է այնպէս դաստիարակւած լինեն, որ ասանց բաշւելու կեանքի դժւար պայմաններում, սխալմունքների ենթարկելուց միշտ գիմեն իրենց ծնողներին, իբրև մեծ ընկերոջ, նոցա խորհուրդը հարցունեն և ոչ թէ ծնողների սարսափից թագնեն և կամ այլ հանապարհ որո-

նեն իրենց սխալմունքը ուղղելու համար:

Իւրաքանչիւր երիտասարդ պէտք է իժանայ, որ սեռական զգացմունքներին բաւականութիւն տալով շրջիկ պոռնիկ կանանց հետ՝ կը նշանակէ իր սեփական առողջութիւնը վատանգի հնթարկել.

Նախ քան ամուսնանալը, նախ քան հասունութիւնը, պէտք է խոյս տալ մերձաւորութիւնից, այլապէս նորաշեղում են ընութեան սահմանած ուղղիդ ճանապարհից և զրկում են ամուսնական կեանքի ապագայ բարիքներից:

Ո՞ւմ չեն յայտնի վեներական ախտերի տարած բազմաթիւ զոհերը, ում չեն յայտնի այն ծանր հիւանդագին գրութիւնը, որ ստեղծում է սիֆիլիսը. ում չեն յայտնի այն բոլոր ջղային հիւանդութիւնները, խելագարութիւնը, որ առաջ է գալիս սիֆիլիսի վարակումից,

Պատանիները պէտք է իմանան այս բոլորը, պէտք է խոյս տան մինչև ամուսնանալը մերձաւորութիւն ունենալ կասկածելի անձնաւորութեանց հետ. սեռական ցանկութիւններին չը պէտք է ստրուկ դառնալ և թուլամորթութեան գիրքն ընկնելով բաւարեկ վաղաժամ սեռական զգացումները:

Պատանիներ և երիտասարդութիւն, եթէ գուը սիրում էք մի բարձր գաղափար, եթէ ձեր մէջ բողբոջում է ապագայում սիրելու ու սիրելու զգացմունքները, եթէ գուը ձեր մտքի առաջ պատկերացնում էք ձեր ապագայ հարսնացւի, մաքուր, անարատ հոգին ու մարմինը, ինչմեռ գուք ևս նոյնը չպարասատէք նրա համար: Միթէ արդարացի է միայն օրիորդից պահանջել մաքուր, յստակ անցեալ. միթէ բարոյագիտութեան պահանջներին համապատասխանում է շատ շա-

տերի կենցաղը, անց կացրած շւայտ
օրերը և դրա հետ միտուին նոցա ա-
նարդաբացի պահանջները ամուսնա-
ցող օրիորդից:

Բժ. Վ. Խաչատրեանց

2013

2986

E 980
150

«Ազգային գրադարան»



NL0074246

